

մալոյծ մը՝ որ 38 տարիներէ ի վեր հոն կը կենար: Աւազանի հինգ սրահներուն երկու կամարները տակաւին կը մնային իբր հնագոյն շինութեան մնացորդ: Հոն կը խոնուէին հիւանդներու, կաղերու և կոյրերու բազմութիւն մը որ կը սպասէր հրեշտակին՝ աւազանին ջուրը շարժելու համար. նոյն շարժման պահուն՝ ով որ առաջին անգամ ջուրը կը մտնէր, կը բժշկուէր և կ'առողջանար (Յովն. Ե. էջ 1-15):

Աւանդաբար կը պատմուի թէ այս աւազանին շինութեան հեղինակն է Սողոմոն, որ երբ տաճարը շինեց, այս տեղն ալ ջուրի աւազան հաստատեց և որ կոչուեցաւ Պէյր հեքար: Այս աւանդութեան մաս կը կազմէ նաև Քրիստոսի Սաչափայտին հետևեալ աւանդութիւնը. Սողոմոնի ժամանակ խաչին Փայտը շինութեան մը պիտոյ չէր, այդ պատճառաւ, Սողոմոնին կողմէ նետուեցաւ այս աւազանին մէջ՝ «իբրեւ զանշահ և զանպէտ իր(\*)»: Մեր Տիրոջ չարչարանաց ժամանակ, նոյն անշահ նկատուած փայտը պատրաստ զտնուեցաւ, վասնզի տեղը Պիղատոսի տան մօտ էր, ու անով կազմուեցաւ Փրկչին խաչը «որ եղեւ մեզ փայտ կենաց» (Տե՛ս վերը, էջ 231-232):

13. Ս. Ասուածածնի դրան առիւծներուն եւ պարիսպի շինութեան աւանդութիւնը. — Ս. Աստուածա-

(\*) Ուրիշ հեղինակներ կը պատմեն թէ Տանարի շինութեան առիւծ խաչին փայտը ո՛ր եւ է բանի չի գործածուեցաւ եւ ան դրուեցաւ զեթի մը վրայ իբր կամուրջ. Սարայի բազումին չուզեց իր ոտքը անոր վրայ դնել, վասնզի ան կը գուշակէր թէ աշխարհի Փրկիչը այս փայտին վրայ պիտի շարչարուէր: Հրեաները նեցեցին զայն աղբակոյտի մը մէջ, որը եղաւ այն հրաշալի աւազանը՝ որուն վրայ կը խօսուի Յովնանու Աւետարանին մէջ (Գլ. Ե.) (Տար. Զ. էջ 598, Բրս. էջ 280):